



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ  
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ  
Ն Ա Խ Ա Գ Ա Հ

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7

Հեռ. 50 20 20, 59 46 01

**ՀՀ ԿԱ ՊԵԿ կառուցվածքային  
ստորաբաժանումների ղեկավարներին,  
հարկային (փարածքային) տեսչությունների պետերին**

Հայաստանի Հանրապետությունում ապօրինի հատումների դեմ պայքարի աշխատանքները համակարգող անտառների պետական մոնիթորինգի խորհրդի 10.07.2008թ. նիստի N20-111 արձանագրության 5-րդ կետի «բ» ենթակետին համապատասխան հարկային մարմնի կողմից փայտանյութի շուկայի վերահսկողության ուժեղացման միջոցառումների կատարումն ապահովելու համար ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության պետի 08.07.2008թ. Ստ-5946/2-3 հանձնարարականի հետագա կատարման նպատակով.

**ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒՄ ԵՄ՝**

1. Հարկային մարմնի իրավասությունների շրջանակներում շարունակել հանձնարարականի 1-ին կետի կատարումը, անօրինական (բնափայտի ձեռքբերման հավաստիությունը հիմնավորող փաստաթղթերի բացակայությամբ) փայտանյութի իրացման փաստերի հայտնաբերման դեպքում ներկայացնելով տեղեկատվություն համապատասխան բնապահպանական տեսչություն՝ օրենքով սահմանված պատասխանատվության միջոցների կիրառման նպատակով:

2. Դադարեցնել հանձնարարականի 2-րդ կետով նախատեսված ամսական կտրվածքով տեղեկատվության տրամադրումը: Տեղեկատվություն տրամադրել միայն ստորաբաժանման (տեսչության) կողմից իրականացված միջոցառումների արդյունքում ապօրինի գործունեության հայտնաբերված փաստերի վերաբերյալ, նշելով ապօրինի գործունեություն իրականացնողների տվյալները, հայտնաբերման վայրը և ամսաթիվը, փայտանյութի ծավալները և օրենքով սահմանված կարգով կիրառված պատասխանատվության միջոցների գումարները:

Գ. Խաչատրյան